



Հայաստանում անցկացվեց ԵՄ ՊՈՆՏՈՍ շաբաթ

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ համատեղ կազմակերպեցին ՊՈՆՏՈՍ ծրագրին նվիրված շաբաթ Հայաստանում: Մասնակից հաստատությունները ներառում էին Հելլասի Հետազոտությունների և տեխնոլոգիաների կենտրոնը, Թրակիայի Դեմոկրիտուս համալսարանը, Կրաստանի Գրին Օլթերնըթիվ ՀԿ-ն և Իլյա Մեչնիկովի անվան Օդեսայի ազգային համալսարանը:

Միջոցառումներին մասնակցում էին երիտասարդ գիտնականներ և մասնագետներ, որոնց համար կազմակերպվեց «Տիեզերական դիտարկումները և շրջակա միջավայրի մոնիտորինգը թեմայով դասընթացի» երկրորդ փուլը, տեղի ունեցավ դաշտային այց դեպի Սևանի ավազան և ՊՈՆՏՈՍ-ի եզրափակիչ կոնֆերանսը, պանելային քննարկում և մամուլի ասուլիս, ինչպես նաև ՊՈՆՏՈՍ հաքաթոնը՝ ուսանողների մասնակցությամբ:

«ՊՈՆՏՈՍ շաբաթ»-ին մասնակցեցին ավելի քան հարյուր մասնագետ և հետաքրքրված մարդիկ, այդ թվում՝ քաղաքականություն մշակողներ, պետական պաշտոնյաներ, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտնականներ, հետազոտողներ, ուսանողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, լրագրողներ և այլք:

Սնծվյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ Կոպերնիկոս համակարգի միջոցով



ՊՈՆՏՈՍ Եզրափակիչ կոնֆերանս

Բացման խոսքով հանդես եկան ՀԱՀ Յակոբեան Բնապահպանական կենտրոնի տնօրեն Ալեն Ամրիխանյանը, Հիդրոոդոլոգիայի և մոնիտորինգի կենտրոնի տնօրենի պաշտոնակատար, պրոֆ. Լևոն Ազիզյանը, և ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը:

«ՊՈՆՏՈՍ նախագծի շրջանակներում Կոպերնիկոս համակարգի տվյալները և ծառայություններն օգտագործվում են շրջակա միջավայրի վերլուծություն և մոնիտորինգ իրականացնելու համար: Հետևաբար, մենք ստեղծել ենք գործիքներ և ալգորիթմներ վերլուծելու արբանյակային պատկերները և տեսնելու, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել, ինչ դինամիկա է այժմ առկա, և ինչ կանխատեսումներ կարելի է անել: Մենք կարող ենք արբանյակային պատկերներով գնալ քսան, երեսուն և ավելի տարիներ հետ և տեսնել, թե ինչպիսին է եղել Սևանա լճի վիճակը 1980-ականներին և հաջորդաբար, ինչպես է այն փոխվել և ինչ կլինի հետո»,- իր խոսքում նշեց ՊՈՆՏՈՍ ծրագրի ղեկավար Ադամի Հարությունյանը: Համաժողովի ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին ՊՈՆՏՈՍ ծրագրի արդյունքները՝ հինգ հետազոտություն և ՊՈՆՏՈՍ գործառնական հարթակը:



Մույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում են ՊՈՆՏՈՍ ծրագրի գործընկեր կազմակերպությունները, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական Միության տեսակետները:



Ընդհանուր սահմաններ: Ընդհանուր լուծումներ:

Զեկույցները ներառում էին բնապահպանական մարտահրավերներին, դրանց գնահատականներին և հանրային մասնակցությանը, ՊՈՆՏՈՍ ծրագրի պիլոտային տարածքներին վերաբերող թեմաներ: ՊՈՆՏՈՍ պիլոտային տարածքը ներառում է Սևանա լիճը և նրա ջրհավաք ավազանը Հայաստանում, Վրաստանի ողջ առափնյա գիծը և Կոլխեթիի ցածրադիր գոտիները, Նեստոս գետը, նրա դելտան, դելտային մոտ առափնյա գոտին Հունաստանում, և Դնեստր գետի դելտան և հարակից տարածքները, լողափերը և հանգստի գոտիները Օդեսա քաղաքից մինչև Դանուբի դելտա Ուկրաինայում: Ծրագրի հետազոտողները և գիտնականները՝ Թրակիայի Դեմոկրիտուս համալսարանի պրոֆեսոր Գեորգիոս Սիլայոսը, Վրաստանի «Գրին Օլթերնըթիվ» ՀԿ-ի ղեկավար Իրակլի Մաչարաշվիլին, Օդեսայի Իյա Մեչնիկովի անվան ազգային համալսարանը և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի ղոկտոր Կարապետ Գազանձեանը ներկայացրեցին իրենց կատարած հետազոտությունների նպատակներն ու արդյունքները:

Այնուհետև Հունաստանից Ժամանած գործընկերները՝ ղոկտոր Իոաննիս Մանակոսը՝ Հելլասի հետազոտությունների և տեխնոլոգիաների կենտրոնից, Էլեֆթերիոս Կացիկիսը՝ Հելլասի Հետազոտությունների և տեխնոլոգիաների կենտրոնից, և ղոկտոր Նիկոլաոս Կոկկոսը՝ Թրակիայի Դեմոկրիտուս համալսարանից, ներկայացրին ղեկույցներ: Նրանք անդրադարձան ՊՈՆՏՈՍ հարթակին և ռեսուրսներին, դրա բաղադրիչներին և ցուցադրությանը, այդ թվում՝ ՊՈՆՏՈՍ տվյալների խորանարդին, ՊՈՆՏՈՍ վեբ հավելվածին, և ՊՈՆՏՈՍ webGIS-ին: Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են [ՊՈՆՏՈՍ կայքում](#):

Հայաստանում իրականացվող Սևծովյան ավազանի (BSB) մի քանի նախագծերի ներկայացուցիչներ՝ նույնպես ներկա էին ՊՈՆՏՈՍ շաբաթին՝ BSB963 Protect-Streams-4-Sea, BSB1034 The Sea of Wine, BSB1107 BeECO և BSB1135 AGREEN: Նրանք ներկայացրին իրենց համապատասխան նախագծերը և դրանց առնչվող նորությունները:

Կոնֆերանսն ավարտվեց մամուլի ասուլիսով՝ պատասխանելու ներկա գտնվող ավելի քան տասը լրատվամիջոցների լրագրողների հարցերին:

Եզրափակիչ կոնֆերանսի ձայնագրությունը հասանելի է [այստեղ](#):

Եռօրյա դասընթաց երիտասարդ գիտնականների և հետազոտողների համար

ՊՈՆՏՈՍ շաբաթվա ընթացքում կազմակերպվել է եռօրյա դասընթաց երիտասարդ գիտնականների, հետազոտողների, տեղական և ազգային կառավարման մարմինների ներկայացուցիչների և համալսարանականների համար: Վերապատրաստվողները ներկայացնում էին ՀՀ Շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Երևանի պետական համալսարանը, Արարատի մարզպետարանը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, և Հիդրոօդերևութաբանության մոնիտորինգի կենտրոնը: Թեմաները մասնավորապես վերաբերում էին բնապահպանական խնդիրների և մարտահրավերների մոնիտորինգին, բնապահպանական խնդիրների բացահայտմանը և արբանյակային պատկերների միջոցով դրանց ուսումնասիրությանը: Դասընթացը ներառում էր ՊՈՆՏՈՍ հարթակի ներկայացումը, ինչպես նաև տեսական և գործնական վարժություններ տիեզերական դիտարկումների վերաբերյալ հետևյալ ուսումնասիրությունների ոլորտների համար՝ ջրի որակ, էվտրոֆիկացիա, ջրային հաշվեկշռի, ջրի արտադրողականության և ջրային սթրեսի ինդեքսների գնահատում, անտառածածկույթի փոփոխությունների և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատում:



Դասընթացն ավարտվեց ճանաչողական այցով ՊՈՆՏՈՍ հայկական պիլոտային տարածք՝ Սևանա լիճ: Դաշտային այցին մասնակցում էին և՛ դասընթացի մասնակիցները, և՛ ՊՈՆՏՈՍ թիմի անդամները: Վերապատրաստման ռեսուրսները հասանելի են [այստեղ](#):

ՊՈՆՏՈՍ Պարբերական #5

Ընդհանուր սահմաններ: Ընդհանուր լուծումներ:

ՊՈՆՏՈՍ Հաքաթոն

ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը համատեղ Հայաստանում կազմակերպեցին ՊՈՆՏՈՍ Հաքաթոն շոկտեմբերի 12-13-ին: Հաքաթոնին մասնակցում էին Հայաստանի տարբեր ակադեմիական հաստատությունների ուսանողներ իրենց կազմած թիմերով:

Մասնակցում էր հինգ թիմ և քսանյոթ ուսանող և հետազոտող, այդ թվում՝ «Libero» թիմը Երևանի պետական համալսարանից, «Ecoteam» ՀՀ ԳԱԱ Էկոլոգիական նոոսֆերային հետազոտությունների կենտրոնից, «ASPU PONTOS» թիմը Հայաստանի պետական մանկավարժական համալսարանից, «Mind Galactice» Երևանի պետական համալսարանից և «EcoFuture» թիմը Հայաստանի ազգային ագրարային համալսարանից:

Հաքաթոնի մարտահրավերները բաղկացած էին երկու մասից՝ նոր գաղափարների ստեղծում՝ օգտագործելով ՊՈՆՏՈՍ գործառնական հարթակը և տեղադրված առցանց ծառայությունները/գործիքները, և առաջարկ ստեղծելով օգտակար հավելված (կամ առանձին լուծում/գործիք) ՊՈՆՏՈՍ հարթակի համար օգտագործելով Կոպերնիկուս-ի տվյալները: Հաքաթոնի առաջարկվող թեմաները ներառում են գաղափարներ կապված կայուն զարգացման նպատակների, հողի փոփոխությունների (այն կարող է ներառել հողի ծածկույթի/հողօգտագործման տարբեր դասեր, ինչպիսիք են անտառները, մշակաբույսերը, խոտհարքները, ջրային մակերեսները և արհեստական ծածկույթները, ինչպիսիք են ճանապարհները և շենքերը), ջրի մաքրության և աղտոտման; գյուղատնտեսական պրակտիկաների (օրինակ՝ բերքի չափի գնահատում հողի խոնավության մասին տեղեկատվություն տրամադրելու և բերքատվությունը կանխատեսելու համար), կլիմայի փոփոխության և այլնի հետ:

«EcoFuture»-ի գաղափարն է տարբեր մեքենաների և պոմպերի օգնությամբ մաքրել Սևանա լիճը ցիանոբակտերիայից, ըստ անհրաժեշտության, և օգտագործել թափոնները կենսագազի առաջացման համար: Կենսագազի արտադրության համար կարող են օգտագործվել Սևանա լճից տարբեր տեսակի թափոններ:



«Ecoteam»-ի գաղափարն է ստեղծել լողափերի գնահատման շերտ ՊՈՆՏՈՍ հարթակում, որը կարտացոլի մասնավոր և հանրային լողափերի բնապահպանական կարգավիճակը: Այն կստեղծվի ՊՈՆՏՈՍ հարթակում գոյություն ունեցող շերտերի համադրմամբ: Գաղափարն աջակցում է լճի տարածքում զբոսաշրջության զարգացմանը:

«ASPU PONTOS»-ը առաջարկում է դպրոցներում ստեղծել արտադասարանական բովանդակություն և գործունեություն՝ ներառելու ՊՈՆՏՈՍ կրթական համակարգը որպես բջջային հավելված և կայք, որտեղ աշակերտները կարող են ստանալ էկոլոգիական գիտելիքներ և տեղեկատվություն (նմանատիպ օրինակներ են Armath ինժեներական լաբորատորիան, My School, Edmodo, Solo Learn համակարգերը):

«Libero»-ն առաջարկում է Սևանա լիճը մաքրել երկու եղանակով՝ օգտագործելով ցիանոբակտերիա վիրուսներ և ֆիզիկական մաքրում հետագա օգտագործման համար: Թիմը նաև առաջարկում է բարելավել ՊՈՆՏՈՍ հարթակը ավելացնելով մեթանի արտանետումները գրանցող համակարգ:

«Mind Galactics»-ի գաղափարն է խողովակաշար կառուցել ամբողջ Սևանա լճի երկայնքով, կոյուղաջրերը մղելու խողովակաշարի մեջ, մաքրելու այն քիմիական եղանակով և ջուրը լիճ վերադարձնելու համար:

ՊՈՆՏՈՍ ծրագրի ազդեցությունը

Կարողությունների զարգացում

- 4 երկրում կարողությունների զարգացում
- 8 վերապատրաստում շուրջ 200 երիտասարդ գիտնականների մասնակցությամբ
- Դասընթացի մասնակցել է 18 վերապատրաստող
- Ստեղծվել է ՊՈՆՏՈՍ հարթակը
- Իրականացվել է 4 հետազոտություն Սևանա լճի վերաբերյալ
- Իրականացվել է 4 հետազոտություն Դինեստր գետի դելտայի վերաբերյալ
- Իրականացվել է 4 հետազոտություն Ռիոնի գետի դելտայի վերաբերյալ
- Իրականացվել է 3 հետազոտություն Նեստոս գետի դելտայի վերաբերյալ

Միջոցառումներ

- 4 մտազրոհ փոխանակման միջոցառում 200 շահառուի մասնակցությամբ
- 4 միջոցառում շահառու համայնքներում՝ ուղղված ծրագրի արդյունքների և նպատակների ներկայացմանը
- 4 միջազգային միջոցառման մասնակցություն
- Երիտասարդների մասնակցությամբ հաքաթոնի կազմակերպում
- 30 թիմային հանդիպումների կազմակերպում
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ 7 միջոցառման կազմակերպում
- 1 լրագրողների շրջայց Հայաստանի պիլոտային տարածք

Գործընկերություն

- 4 երկրներից գործընկեր կազմակերպությունների մեկտեղում
- 6 գործընկեր կազմակերպություն ավելի քան 20 վարչական և հետազոտական աշխատակիցներ
- 13 հուշագրի ստորագրում չորս երկրում
- 4 տեղական խմբերի ձևավորում մասնակից երկրներում ջրի կառավարման և աղտոտվածության կանխարգելման նպատակով

Հանրայնացում

- 170,000 հանրության ներկայացուցչի հետ հաղորդակցության հաստատում տեղեկատվական նյութերի, կայքի և սոցիալական ցանցի միջոցով
- 6 պարբերականի պատրաստում
- 6 կրթական թվային մոդուլի պատրաստում
- pontos-eu.aua.am կայքի ստեղծում և կառավարում
- շուրջ 5000 տեղեկատվական թռուցիկների տարածում
- նախագծի վերաբերյալ տեսանյութի պատրաստում

Օդեսայում անցկացված Պոնտոս միջոցառումները

Օդեսայի Իլյա Մեչնիկովի անվան ազգային համալսարանի Շրջակա միջավայրի ինտեգրված մոնիտորինգի տարածաշրջանային կենտրոնի կողմից կազմակերպվել են մի քանի առցանց միջոցառումներ, որոնք տեղի են ունեցել 2022 թվականի հուլիսին «Կոպերնիկոս» համակարգի միջոցով Սևծովյան ավազանում իրականացվող շրջակա միջավայրի մոնիտորինգ - ՊՈՆՏՈՍ ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության ԵՀԳ Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության 2014-2020 թթ. համատեղ գործառնական ծրագրի կողմից:

Հուլիսի 20-ին Օդեսայում կայացած համատեղ բաց աշխատաժողովին մասնակցել են 60 մասնակից: Այս միջոցառմանը Պոնտոս կոնսորցիումը շահագրգիռ կողմերին ներկայացրեց չորս մասնակից երկրներում իրականացված ծրագրի ընդհանուր առաջընթացը և նախնական արդյունքները:

Աշխատաժողովը մեկնարկեց Օդեսայի ազգային համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Իվանիցան: Նա ղեկավար, պրոֆեսոր Վյաչեսլավ Տրուբայի անունից ողջունեց մասնակիցներին: «Հուսով եմ, - ասաց պրոֆ. Իվանիցան, - որ ՊՈՆՏՈՍ-ի այսօրվա և գալիք միջոցառումները կհետաքրքրեն մասնակիցների լայն շրջանակի գիտական զանգվածին, իշխանություններին, ոլորտային գործակալություններին, ՀԿ-ներին, և որ առկա բնապահպանական մարտահրավերների վերաբերյալ ծրագրի տվյալները օգտակար կլինեն երկրի հետպատերազմյան կայուն վերականգնման հարցում»:

Հաջորդ բանախոսը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանից (ՀԱՀ) ՊՈՆՏՈՍ ծրագրի ղեկավար Ադամի Հարությունյանը նույնպես ողջունեց մասնակիցներին և ներկայացրեց ծրագրի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ նպատակները, արդյունքները, գործընկերներին, բոլոր գործընկեր երկրների պիլոտային տարածքները, ընդհանուր և կոնկրետ նպատակներն ու ակնկալվող արդյունքները:

ՊՈՆՏՈՍ-ի գործողություններին նվիրված աշխատաժողովի ընթացքում ծրագրի գործընկերներին ներկայացվել են պիլոտային տարածքներում կատարված հետազոտությունների նախնական արդյունքները:

Հունաստանում, Վրաստանում և Ուկրաինայում առափնյա գծի փոփոխությունների գնահատման դինամիկայի վերաբերյալ զեկույցը ներկայացրեց դոկտոր Կոնստանտինոս Չակոպուլոսը, ԹԴՀ, Հունաստան: Հայկական և վրացական պիլոտային տարածքներում անտառածածկույթի փոփոխությունների և շրջակա միջավայրի վրա դրանց հետևանքների գնահատումն իրականացվել է դոկտոր Իրակլի Մաչարաշվիլիի կողմից, «Գրին Օլթերնըթիվ» ՀԿ, Վրաստան: Ճահճային և լողացող բուսածածկույթի փոփոխությունների գնահատումը նկարագրվել է դոկտոր Սերգեյ Մեդինեսի կողմից: Բլորոֆիլի կոնցենտրացիայի և էվտրոֆիկացման դինամիկայի գնահատումը ներկայացրեց դոկտոր Կարապետ Գազանճեանը, ՀԱՀ, Հայաստան: Գյուղատնտեսական ջրային հաշվեկշիռը, ջրի արտադրողականությունը և ջրի սթրեսի ինդեքսները լուսաբանվել են դոկտոր Իոաննիս Ցակմակիսի կողմից:

Հաջորդ մասը նվիրված էր գործընկեր կազմակերպությունների զեկույցներին (BSB նախագծեր, որոնք իրականացվել են Ուկրաինայի պիլոտային տարածքում):

IASON նախագիծ (BSB 1121). Դանուբի դելտայում IAS մոնիտորինգը և ռիսկի գնահատումը ներկայացվել է դոկտոր Միխայլո Սոնի կողմից, Օսովային կենսաբանության ինստիտուտ (Ուկրաինայի Գիտությունների ազգային ակադեմիա):

Օդեսա պոլիտեխնիկական ազգային համալսարանից (Ուկրաինա) Դոկտոր Վալերի Լեբիդը և դոկտոր Կատերինա Վասուտունսկան ներկայացրեցին LeNetEco2 (BSB 1088) ծրագիրը Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի համատեղ վերահսկողության և մոնիտորինգի համախմբման ջանքերի շուրջ ուսուցման ցանցի ստեղծում:

Հաջորդ շնորհանդեսը նվիրված էր Protect-streams-4-Sea ծրագրին (BSB 963), որը պատրաստել էր դոկտոր Իլիա Տրոմբիցկին Մոլդովայի գետապահների միջազգային ասոցիացիայի Էկո-Տիրասի գործադիր տնօրենը:

Վերջինը, բայց ոչ պակաս կարևորը ANEMONE նախագծի ներկայացումն էր (BSB 319)՝ ծրագրի արդյունքները Սև ծովի ուկրաինական հատվածում, որը ներկայացրեց Յուրի Դենգան Օդեսայի ծովի էկոլոգիայի ուկրաինական գիտական կենտրոնից:

ՊՈՆՏՈՍ Պարբերական #5

Ընդհանուր սահմաններ: Ընդհանուր լուծումներ:

Համատեղ բաց աշխատաժողովն ավարտեց դոկտոր Սերգեյ Մեդինեցը, ով շնորհակալություն հայտնեց բոլոր բանախոսներին իրենց ընդգրկուն զեկույցների և ուկրաինացի ժողովրդին աջակցության խոսքերի համար: Նա ասաց, որ չնայած բոլոր մարտահրավերներին, սկսած Covid-19-ից մինչև Ռուսաստանի կողմից լայնամասշտաբ ներխուժումը Ուկրաինա, նախագիծն արդեն տվել է շատ արժեքավոր արդյունքներ և կավարտվի հաջողությամբ և ժամանակին:

Օդեսայում տեղական բաց աշխատաժողովը տեղի ունեցավ 2022 թվականի հուլիսի 21-ին: Այս միջոցառմանը Պոնտոս նախագծի ուկրաինացի գործընկեր Օդեսայի Իլյա Մեչնիկովի անվան ազգային համալսարանի թիմը մանրամասն ներկայացրեց ուկրաինական պիլոտային տարածքում կատարված չորս տարածաշրջանային հետազոտությունների նախնական արդյունքները

1. Առափնյա գոտու փոփոխություններ (պրոֆ. Եվգեն Զերբեգ)
2. Քլորոֆիլի կոնցենտրացիայի և էվտրոֆիկացիայի դինամիկա (Դոկտոր Վոլոդիմիր Մեդինեց)
3. Ջրային բուսական ծածկույթի փոփոխություններ (դոկտոր Սերգեյ Մեդինեց)
4. Գյուղատնտեսական ջրային հաշվեկշիռ (դոկտոր Սերգեյ Մեդինեց)

Նույն օրը կեսօրին՝ հուլիսի 21-ին, կազմակերպվեց ևս մեկ առցանց աշխատաժողով՝ Օդեսայում Պոնտոս հարթակին ծանոթացման տեղական միջոցառումը: Այս միջոցառման ընթացքում Պոնտոս թիմը մասնակիցներին ներկայացրեց նախագծի շրջանակներում մշակված ինտերակտիվ Պոնտոս հարթակի բետատարբերակը: Հարթակի երեք մոդուլների կարողությունները ներկայացված են ուկրաինական պիլոտային տարածքի օրինակով: Մասնակիցները ձեռք բերեցին գործնական փորձ այն մասին, թե ինչպես արդյունավետ օգտագործել հարթակը, քանի որ բանախոսներից հետո նրանք հնարավորություն ունեցան կրկնել օգտագործելով իրենց նոթբուքերը կամ սմարթֆոնները: Մասնակիցները հարցեր ուղղեցին և առաջարկություններ ներկայացրեցին: Տվյալների բաց խորանարդ և վեբ հավելված մոդուլները ներկայացրել է Էլեֆթերիոս Կացիկիսը (CERTH), իսկ Web GIS մոդուլը՝ դոկտոր Նիկոլաոս Կոկկոսը (DUTH):

Բոլոր երեք միջոցառումների մասնակիցները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին ծրագրի արդյունքների նկատմամբ և բազմաթիվ հարցեր տվեցին գործնական աշխատանքի վերաբերյալ:

Մասնավորապես, բոլոր մասնակիցները գնահատեցին Պոնտոս հարթակի հնարավորություններն ու հարմարավետությունը և պատրաստակամություն հայտնեցին օգտագործել այն իրենց ամենօրյա աշխատանքում:

Հուլիսի 2-ին Օդեսայում երիտասարդ գիտնականների և պրակտիկանտների համար անցկացվեց առցանց դասընթաց Երկրի դիտարկման (EO) և շրջակա միջավայրի մոնիտորինգի վերաբերյալ: Դասընթացին մասնակցում էին 43 մասնակից: Միջոցառումը բացվեց դոկտոր Սերգեյ Մեդինեցի խոսքով (ONU), ով ողջունեց մասնակիցներին, ովքեր ցանկանում էին ավելացնել իրենց գիտելիքներն ու հմտությունները տիեզերական պատկերների մշակման գործում: Նույնիսկ Գազետովը ONU-ի ավագ գիտաշխատող, երկու օր շարունակ մասնակիցներին ներկայացնում էր տիեզերական դիտարկման օգտագործման տարբեր «գաղտնիքներ» և «առանձնահատկություններ» սկսած Պոնտոս ինտերակտիվ հարթակի, Կոպերնիկոս Open Access Hub-ի և Sentinel Hub-ի հետ աշխատելու համար պահանջվող հիմնական գիտելիքներից և քլորոֆիլի կոնցենտրացիայի հաշվարկներից օգտագործելով Sentinel հավելվածի հարթակի (SNAP) գործիքը և պատկերների մշակման հիմունքները օգտագործելով կիսավտոմատ դասակարգման պլագը (SCP) հիմնված մեքենայական ուսուցման ալգորիթմի վրա:

Տիեզերական դիտարկումը օբյեկտիվ տեղեկատվության աղբյուր է շրջակա միջավայրի մոնիտորինգի համար: Այն կարող է զգալիորեն բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը իր վիճակի մասին, հատկապես Սևծովյան ավազանի երկրներում, որոնցից շատերում տեղում հավաքված շրջակա միջավայրի մոնիտորինգի ցանցերը կամ դեռևս զարգացած չեն, կամ բավականաչափ ընդարձակ չեն: Դասընթացը ցույց տվեց տիեզերական դիտարկման ամենօրյա օգտագործման մեծ ներուժը գրեթե բոլորի համար ուսանողից մինչև տարածաշրջանային իշխանության ներկայացուցիչը:

Ընդհանուր սահմաններ: Ընդհանուր լուծումներ:

Մեդիա շրջայց դեպի «Պոնտոս ծրագրի» պիլոտային տարածք Սևանի ջրհավաք ավազան»

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հետ համատեղ մեդիա շրջայց է կազմակերպել Սևանա լիճ և նրա ջրհավաք ավազան: Շրջայցը ներառում էր այցելություններ Հայրիվանք, Նորատուս, Լիճք և Մարտունու շրջաններ: ՊՈՆՏՈՍ ծրագրի հետազոտական թիմը ուսումնասիրում է պիլոտային տարածքը՝ Սևանա լիճը և նրա ջրհավաք ավազանը, գնահատում և վերլուծում է հրդեհների հետևանքով առաջացած կամ այրված տարածքներում հողածածկույթի և հողօգտագործման փոփոխությունները, ինչպես նաև խոնավ տարածքներն ու լողացող բուսածածկույթը 2009-2019 թվականների համար, Էվորոֆիկացման դեպքերը 2009-2021 թվականների համար և դրանց կապը օրգանական նյութերի հոսքերի հետ և գյուղատնտեսության ջրային հաշվեկշիռը, ջրի արտադրողականությունը և ջրի սակավության ինդեքսները:

Այս դաշտային այցի ընթացքում լրագրողներին ներկայացվեցին պիլոտային տարածքի բնապահպանական հատուկ մարտահրավերներն ու խնդիրները, որոնց անդրադարձնում է ՊՈՆՏՈՍ ծրագիրը, ինչպիսիք են ջրային բուսականությունը և հարակից մարտահրավերները, կոշտ թափոնների և կեղտաջրերի խնդիրները, անտառածածկույթի փոփոխությունների հետ կապված մարտահրավերները, ձկնաբուծարանները և այլն:

Յուրաքանչյուր ոլորտում ՊՈՆՏՈՍ-ի հետազոտողները ներկայացրել են այն խնդիրները, լուծումներն ու աջակցությունը, որոնք կարող են տրամադրվել այս ծրագրի շրջանակներում:

Պոնտոս ծրագիրը մեծամասամբ նպաստում է Հայաստանում համապատասխան կառույցների ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը, հետազոտությունների համար մեթոդաբանության մշակմանը, ինչպես նաև առկա հրատապ խնդիրների վերհանմանը:

Ծրագրի արդյունքները ներառում են մի շարք նշանակալի ներդրումներ Հայաստանի և գործընկեր երկրների համար:



Կարապետ Գազանջեան, ՊՈՆՏՈՍ հետազոտող

Մասնավորապես՝

- ՊՈՆՏՈՍ հարթակի ստեղծումը, ներառյալ տվյալների խորանարդը, WebGIS-ը և վեբ հավելվածը, որը քաղաքականություն մշակողներին, լրագրողներին, հետազոտողներին, ուսանողներին և շահագրգիռ քաղաքացիներին հնարավորություն է տալիս արագ վերլուծություններ կատարել ՊՈՆՏՈՍ ծրագրի պիլոտային տարածքի Սևանա լճի վերաբերյալ:
- Հարթակն ապահովում է սնծովյան ավազանի վերաբերյալ միջսահմանային բնապահպանական մոնիտորինգի համապատասխան տվյալների և տեղեկատվության մատչելիությունն ու արդիականացումը:
- Գործընկերների կողմից մշակված կրթական նյութերի և ռեսուրսների, ինչպես նաև կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների միջոցով ծրագիրը նպաստում է համախմբված և միատեսակ մեթոդալրգիայի մշակմանն ու կիրառմանը ծրագրի բոլոր պիլոտային տարածքներում:
- Ծրագրի գործընկեր երկրներում համագործակցող թիմի ստեղծում, որն իր հերթին համախմբում և ներգրավում է տեղական մասնագետներին ու նաև ապահովում կապը գործընկեր երկրների մասնագետների միջև: Մա էականորեն նպաստում է տվյալների փոխանակմանը ՊՈՆՏՈՍ ծրագրի գործիքների միջոցով:
- Ծրագիրն ապահովում է իրազեկվածության բարձրացում ջրի որակի և դինամիկայի վերաբերյալ:

Մեդիա շրջայցի ավարտին մասնակից լրագրողներն ու լրատվամիջոցների ներկայացուցիչները հրապարակեցին շրջայցի հետ կապված հոդվածներ:

Ուկրաինայում անցկացվել է ՊՈՆՏՈՍ-ի համակարգման առցանց հանդիպում

Հուլիսի 15-ին «Կոպերնիկուս» համակարգի միջոցով Սևծովյան ավազանում իրականացվող շրջակա միջավայրի մոնիտորինգ (ՊՈՆՏՈՍ) կոնսորցիումի անդամները մասնակցեցին չորրորդ համակարգման հանդիպմանը, որը անցկացվեց առցանց և կազմակերպվեց ՊՈՆՏՈՍ-ի ուկրաինացի գործընկեր Օդեսայի Բյա Մեչնիկովի անվան ազգային համալսարանի թիմի կողմից: Հանդիպմանը մասնակցում էր ՊՈՆՏՈՍ-ի ողջ թիմը՝ ներառյալ հետազոտողներ, ծրագրի ղեկավարներ, հաղորդակցության և ադմինիստրատիվ թիմեր: Հանդիպումը սկսվեց Օդեսայի Բյա Մեչնիկովի անվան ազգային համալսարանից (ОНУ) Մերգեյ Մեդինեցի ողջունի խոսքով: Ծրագրի համակարգման հանդիպման օրակարգը նվիրված էր Թբիլիսիում կայացած վերջին համակարգման հանդիպումից հետո իրականացված աշխատանքներին և ծրագրի թիմի առաջընթացին: Թիմը քննարկել է առաջիկա արդյունքներն ու աշխատանքները: Քանի որ ծրագիրը մոտենում է վեց ամսից ավարտին, ներկայացվեցին ՊՈՆՏՈՍ ծրագրի պիլոտային տարածքներում կատարված գնահատումների թարմացումները: Հետազոտական թիմը սկսել է վերջնական հաշվետվությունների պատրաստումը չորս գնահատումներից յուրաքանչյուրի համար (անտառածածկույթի փոփոխություններ, ճահճային և լողացող բուսական ծածկույթի փոփոխություններ, քլորոֆիլի կոնցենտրացիա և էվտրոֆիկացման դինամիկա, և գյուղատնտեսական ջրային հաշվեկշիռ, ջրի արտադրողականություն և ջրային սթրեսի ինդեքսներ) կազմելով դաշտային աշխատանքների և հետազոտությունների վերաբերյալ արդյունքները:



Դր. Գազանճեանը մասնակցել է Լիմնոլոգիայի միջազգային ընկերության 36-րդ համագումարին

Օգոստոսի 8-ին Գերմանիայի Բեռլին քաղաքում Հայաստանի ամերիկյան համալսարանից (ՀԱՀ) պրոֆեսոր և ՊՈՆՏՈՍ ծրագրի հետազոտող դոկտոր Կարապետ Գազանճեանը մասնակցել է Լիմնոլոգիայի միջազգային հասարակական 36-րդ կոնգրեսին (SIL 2022) «Առաջիկա 100 տարիները և ջրերի զգայունությունն ու պաշտպանությունը թեմայով»: SIL 2022-ին դոկտոր Գազանճեանը ելույթ ունեցավ ՊՈՆՏՈՍ ծրագրի շրջանակներում քլորոֆիլի կոնցենտրացիայի և էվտրոֆիկացման դինամիկայի գնահատման վերաբերյալ: Ձեկույցին հաջորդեց ակտիվ քննարկում Սևանա լճի ջրի որակի բարելավման, հեռահար գոնդավորման կարողությունների և բնության վրա հիմնված լուծումների վերաբերյալ հարցերի շուրջ: Գերմանիայի, Նիդեռլանդների, Ֆրանսիայի, Կանադայի և այլ երկրների գիտական հաստատությունների, ինչպես նաև Berliner Wasserwerk-ի հետազոտողների հետ արդյունավետ քննարկումները նախադրյալներ ստեղծեցին թեմայի շուրջ ապագա համագործակցության համար: 1922թ. Օգյուստ Թիենմանի և Էյնար Նաումանի կողմից ստեղծված Լիմնոլոգիայի միջազգային միությունը (SIL) հիմնել է ներքին ջրերի գիտությունը ներառելով լճերն ու լճակները, առուներն ու գետերը, մակերևութային և ստորերկրյա ջրերը և խոնավ տարածքները: Այս համապարփակ նախաձեռնությունն արտացոլեց հիմնադիրների լայն տեսակետը և ուղղություն դրեց համախմբելու լիմնոլոգիան որպես համակարգային գիտություն հիմնվելով ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և ավելի ու ավելի շատ սոցիալ-տնտեսական գիտությունների վրա միաժամանակ գիտակցելով հետաքրքրասիրության վրա հիմնված հետազոտությունների և իրական աշխարհի խնդիրների վերլուծության համադրման արժեքը: Ամենաուշագրավն այն է, որ SIL-ը և նրա կոնֆերանսները միջազգային են և ներկայացնում են գիտությունը և մարդկանց բոլոր մայրցամաքներից, որը հասարակության բնորոշ նշան է սկսած 1922թ. Գերմանիայի Պյուն քաղաքում կայացած անդրանիկ կոնգրեսից:

ՊՈՆՏՈՍ Պարբերական #5

Հնդհանուր սահմաններ: Հնդհանուր լուծումներ:

Լրացուցիչ տեղեկության համար
Էլ. փոստ՝ pontos@aua.am
Կայք՝ pontos-eu.aua.am

AUA ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT



Project funded by
EUROPEAN UNION

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում են ՊՈՆՏՈՍ ծրագրի գործընկեր կազմակերպությունները, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական Միության տեսակետները:

